**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/6701-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-161-10.02.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 230-Ա որոշումը:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչանյան

Հեռ. 515656

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՊՆ-161-10.02.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 130-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, համաձայն որի վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 124.7-րդ, 125-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ, 170.3-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական մարմինների կողմից կայացված վարչական ակտերի վերաբերյալ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վարչական մարմինները վերաքննիչ բողոք բերելու իրավունք չունեն:

Միաժամանակ, առաջարկվում է օրենսգրքի 154-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով, ըստ որի վարչական մարմինների՝ վճռաբեկ բողոք բերելու դեպքերի վրա տարածվում են սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնները:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները՝

1. Առաջարկվող կարգավորումը վիճելի է ինչպես Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի, այնպես էլ Սահմանադրական դատարանի որոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի համատեքստում, մասնավորապես, վարչական մարմնի բողոքարկման իրավունքի սահմանափակումը խաթարում է Վճռաբեկ դատարանի՝ որպես դատական իշխանության բարձրագույն մարմնի՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթի իրականացումը: Արդյունքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ նախագծով նախատեսված գործերով վարչական դատարանների կողմից ձևավորվի ոչ միատեսակ կամ սխալ դատական պրակտիկա, իսկ Վճռաբեկ դատարանը զրկված լինի իր սահմանադրաիրավական առաքելությունն իրականացնելու հնարավորությունից:

Պետք է նկատի ունենալ նաև, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, համաձայն

որի Եվրոպական կոնվենցիան պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, **այնուամենայնիվ, եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն 6-րդ հոդվածի երաշխիքներից**[1]:

Այս առումով ուշադրության է արժանի «շահագրգիռ անձինք» եզրույթը, որը թույլ է տալիս ենթադրել, որ ՄԻԵԴ դիրքորոշմամբ այդ իրավունքը վերապահված է բոլոր շահագրգիռ անձանց՝ առանց որևէ բացառության:

Բացի դրանից, Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ **կողմերն իրավունք ունեն** սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում **բողոքարկելու դատական ակտերը:** Նշված դրույթից բխում է, որ դատավարության կողմերն օժտված են հավասար դատավարական իրավունքներով և պարտականություններով, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքով, հետևաբար նախագծով առաջարկվող կարգավորումը կհանգեցնի վարչական դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտման:

Այսպիսով, անկախ այն հանգամանքից, թե դատավարության որ կողմի համար է սահմանափակվում վերաքննության կարգով բողոքարկման իրավունքը, անհրաժեշտ է արձանագրել, որ նման սահմանափակումը պետք է կատարվի Հայաստանի Հանրապետության ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված սկզբունքներին համապատասխան:

Հարկ է նշել, որ բազմաթիվ են սահմանադրական դատարանի որոշումներն ուղղված եռաստիճան դատական համակարգի երաշխավորման հրամայականի կենսագործմանը: Սակայն նման կարգավորման ընդունման պարագայում մեծաթիվ գործերով կբախվենք ոչ թե եռաստիճան, այլ միաստիճան դատական համակարգի առկայության փաստին, որը, միանշանակորեն, կհանգեցնի խնդիրների նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների իրականացման տեսանկյունից:

2. Ինչ վերաբերում է այն հիմնավորմանը, թե նախագծով սահմանափակվում է վարչական մարմնի ոչ թե իրավունքի, այլ գործիքակազմի իրացումը, հարկ է նկատի ունենալ, որ բավարարված վերաքննիչ և (կամ) վճռաբեկ բողոքներն արդեն իսկ ձևավորվել են նախադեպային պրակտիկա՝ նմանատիպ այլ գործերի լուծման համար դառնալով

---

[1] Տե՛ս Staroszczyk v. Poland, գանգատ թիվ 59519/00, 2007թ. մարտի 22-ի վճիռ, կետ 125, Andrejeva v. Latvia [GC], գանգատ թիվ 55707/00, կետ 97:

կիրառելի դատական ակտ, և ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերել պոզիտիվ իրավունքին համարժեք հատկանիշներ:

Հետևաբար, անհիմն է նախագծի հիմնավորմամբ ներկայացված այն տեսակետը, որ վարչական մարմինների կողմից խնդրո առարկա դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների ներկայացումը գործնականում ինքնանպատակ է. դրա մասին է վկայում վարչական մարմինների կողմից ներկայացված և բավարարված բողոքների առկայությունը (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/1322/05/16, ՎԴ/2233/0516, ՎԴ/2198/05/16, ՎԴ/5641/05/18 վարչական գործերով կայացված դատական ակտերը Երևան համայնքի կողմից բողոքարկվել են վերաքննության կարգով, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի կողմից բողոքները բավարարվել են, իսկ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/1176/05/17 վարչական գործով կայացված դատական ակտը Երևան համայնքի կողմից բողոքարկվել է վճռաբեկության կարգով, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կողմից բողոքը բավարարվել է):

3. Անդրադառնալով նախատեսվող սահմանափակման տրամաբանությանը, հարկ է ընդգծել, որ ներկայացված չէ որևէ հիմնավորում առ այն, թե ինչով է պայմանավորված վարչական իրավախախտումների տվյալ տեսակների ընտրությունը: Թեև, նախագծի հիմնավորմամբ նշվել է, որ բողոքարկման ոչ ենթակա վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ընտրության համար հաշվի են առնվել վարչական իրավախախտումների առանձնահատկությունները, դրանց դրամական արժեքը, դրսևորումը, հանրային վտանգավորությունը, այնուամենայնիվ, որևէ կերպ հիմնավորված չէ՝ ինչում է արտահայտվում այդ առանձնահատկությունը, նախագծով ընտրված վարչական իրավախախտումների նվազ հանրային վտանգավորության աստիճանը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու կոնկրետ այդ իրավախախտումների վերաբերյալ գործերի դեպքում վարչական մարմնի վերաքննիչ բողոք ներկայացնելու սահմանափակման անհրաժեշտությունը:

4. Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Սահմանադրական դատարանը 2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1037 որոշմամբ, անդրադառնալով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությանը, նշել է. «... վիճարկվող իրավակարգավորումը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցագնի չափով

պայմանավորված՝ վերաքննության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ չի խաթարվում արդար դատաքննության իրավունքի բուն էությունը: ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով, օրենսդիրը սահմանելով դրանում նշված գործերով վերաքննության իրավունքի սահմանափակում, շեղվել է օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման բացառություններ սահմանելու անհրաժեշտությունը բխում է 1995 թվականի փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Դատական վերահսկողության իրավունք» վերտառությամբ 1-ին հոդվածի «b» կետի պահանջներից, որի համաձայն բացառությունները դատական վերահսկողության իրավունքից թույլատրելի են միայն այն պայմանով, որ **համապատասխանեն արդարության ընդհանուր սկզբունքներին**:»: Թեև Սահմանադրական դատարանի նշված որոշումը վերաբերում է անձանց բողոքարկման իրավունքի՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակմանը, գտնում ենք, որ դրանով նախատեսված իրավական դիրքորոշումները պետք է հաշվի առնվեն նաև վարչական գործերով վարչական մարմինների բողոքարկման իրավունքի սահմանափակման համատեքստում:

Մյուս կողմից, Վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է դատական ակտերի անվերապահ բեկանման հիմքերը:

Առաջարկվող լրացումներով, նախատեսելով վերաքննության իրավունքի սահմանափակում, ինչը փաստացի շեղվում է Վարչական դատավարության օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ վարչական դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

5. Նախագծի հիմնավորման մեջ նշվում է նաև, որ վարչական մարմինների՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու հնարավորության սահմանափակումը համահունչ է նաև ներկայումս Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) նախատեսված մի շարք

կարգավորումների: Այդ կարգավորումներով նախատեսված է, որ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելու պահից օրինական ուժի մեջ է մտնում և վերաքննության և (կամ) վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չէ:

Հարկ ենք համարում նշել, որ վարչական դատարանի կողմից հատուկ վարույթների կարգով քննվող գործերով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ կայացման պահից օրինական ուժի մեջ մտնելը և վերաքննության և (կամ) վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չլինելը ինքնանպատակ չէ և պայմանավորված է կարգավորվող հասարակական հարաբերության բնույթով և դրա առանձնահատկություններով:

Հատուկ վարույթների առնչությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ նշելով, որ հատուկ վարույթի շրջանակներում վարչաարդարադատական ընդհանուր կանոններից տարբեր՝ առանձնահատուկ իրավակարգավորումներ նախատեսելը, այդ թվում՝ հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, կոչված է երաշխավորելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված (61-րդ հոդվածի 1-ին մաս, 75-րդ հոդված)՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացման կազմակերպական և ընթացակարգային ընդհանուր սկզբունքների իրացումը, միտված է արագ, արդյունավետ արդարադատության իրականացմանը, հանրային իրավական նշանակության հրատապ հարցերի լուծմանն ու անձանց Սահմանադրությամբ ու օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես, հավաքի անցկացման գործերով օրենսդիրը վարչական դատարանին առաջադրել է արագ (դատաքննության սեղմ ժամկետներում), մինչև իրազեկմամբ նախատեսվող միջոցառման իրականացումը կոլեգիալ կազմով իրականացնել գործի հանգամանքների ամբողջական, բազմակողմ և արդյունավետ այնպիսի քննություն իրականացնելու սահմանադրաիրավական խնդիր, որի արդյունքում գործով ըստ էության կայացված ակտն իրավաբանական ուժի տեսանկյունից լինի անշրջելի: Որպես հիշյալ խնդրի արդյունավետ իրականացման երաշխիք՝ օրենսդիրը դիտարկել է վարչական դատարանի կոլեգիալ կազմը (երեք դատավորի կազմով) Հայաստանի Հանրապետության վարչ. դատ. օր. 203-րդ հոդված), դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների սահմանափակ կազմը (հավաքի կազմակերպիչ, համապատասխան տարածքի սեփականատեր կամ վարձակալ) ՀՀ վարչ. դատ. օր. 202-րդ հոդված), դատարան դիմելու և

դատաքննության՝ ընդհանուր կանոնակարգումից տարբեր առավել սեղմ ժամկետները (ՀՀ վարչ. դատ. օր. 204-րդ հոդված)[2]:

Վերը նշված առանձնահատկություններն են, որ տարբերակում են հատուկ վարույթները և պայմանավորում ընդհանուր կանոններից նախատեսված բացառություններն ու սահմանափակումները:

6. Ինչ վերաբերում է արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մաս կազմող գործի քննության ողջամիտ ժամկետի ապահովման և Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական և վճռաբեկ դատարանների էապես բեռնաթափման՝ նախագծով ակնկալվող արդյունքներին, ապա նշվածի առնչությամբ հարկ ենք համարում հայտնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «**Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին**» N 1441-Լ որոշմամբ հաստատված դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ որպես ռազմավարական ուղղություններ որդեգրվել են դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովումը: Մասնավորապես, փաստելով, որ դատարանների գերբեռնվածությունը խոչընդոտում է դատական գործերի արագ և արդյունավետ քննությանը՝ հանգեցնելով անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումների:

Այս համատեքստում խնդիրը լուծելու համար նախատեսվում է ավելացնել դատավորների և դատավորի օգնականների թիվը, ներդնել վեճի լուծման այլընտրանքային արդյունավետ միջոցներ, այդ թվում՝ էլեկտրոնային գործիքներ, ինչպես նաև ներդնել և ակտիվորեն օգտագործել էլեկտրոնային կառավարման համակարգերը, հետևաբար կարծում ենք՝ քննարկվող նպատակին հասնելու համար հատվածային կամ միջանկյալ լուծումները հիմնավորված չեն և, ըստ էության, չեն հանգեցնելու խնդրի համակարգային կարգավորման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագիծը բարձրացված խնդիրների համատեքստում խնդրահարույց է, ուստի առաջարկում ենք ձեռնպահ մնալ դրա ընդունումից:

---

[2] Տես 2016 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴՈ-1314 որոշումը http://concourt.am/decision/decisions/sdv-1314.pdf հղումով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 230-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-161-10.02.2022-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-161-10.02.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-139-Ն վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝Օրենսգիրք) 130-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով.

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 124.7, 125-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ, 140-րդ, 170.3 հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական մարմինների կողմից կայացված վարչական ակտերի վերաբերյալ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վարչական մարմինները վերաքննիչ բողոք բերելու իրավունք չունեն:

Հոդված 2. Օրենսգրքի 154-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով.

5. Վարչական մարմինների՝ վճռաբեկ բողոք բերելու դեպքերի վրա տարածվում են սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնները:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: